1919 թ. հունիսի 22, կիրակի

«Աշխատավոր» թերթ, N 124

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ՄԻՏԻՆԳ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ղարաբաղի անցքերի առիթով

Թիֆլիսի Հայոց Վանքի Մայր եկեղեցու բակ

Թիֆլիսի բոլոր հայկական հասարակական կազմակերպությունների և հիմնարկությունների հրավերով Թիֆլիսի Վանքի բակում տեղի ունեցավ համահայկական մեծ միտինգ, որին մասնակցում էին տասնյակ հազարավոր քաղաքացիներ:

Միտինգը բաց արեց հայրենակցական միությունների կենտրոնական վարչության նախագահ Հովհաննես Թումանյանը: Նա մատնանշեց, որ հայկական միջնաբերդը՝ Ղարաբաղը մայր երկրից անջատելու համար կատարված իրադարձությունների հեղինակները տաճկական ագենտներն են, և կոչ արեց հարևան ազգերի համերաշխ գործակցության:

Ապա խոսեցին՝ Հ. Սպենդիարյան, Ալ. Պապովյան, Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի անդամ Աշոտ Մելիք-Հովսեփյան, Արշակ Թաղեանոսյան, Տեր-Գրիգորյան (Ղարաբաղի բարբառով) և Տարոնացի (արևմտահայ):

Վերջում միտինգի նախագահ Հովհաննես Թումանյանը կարդաց հետևյալ բանաձևը, որ միտինգի կողմից ընդունվեց միաձայն.

«Կիրակի, հունիսի 22-ին, Վանքի գավթում տասնյակ հազարավոր հայության, Անդրկովկասի և Տաճկահայաստանի գավառների հայ Հայրենակցությունների և հայկական այլ հասարակական կուլտուրական 40-ից ավելի հիմնարկությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, հայկական Ղարաբաղում տեղի ունեցող արյունալի դեպքերի առթիվ կայացած միտինգը արեց հետևյալ որոշումը.

Ի նկատի ունենալով, որ համաշխարհային պատերազմի ընթացքում, այն ժամանակ, երբ հայ ժողովրդին վիճակվեց մեն-մենակ պաշտպանել Երզնկայից մինչև Խրամ գետը ձգվող հսկայական ֆրոնտը, Ղարաբաղը իր 300 000 հայությամբ, որ կազմում է ամբողջ ազգաբնակչության մոտ 80 տոկոսը, հերոսական կռիվ մղեց տաճկական զորքի դեմ: Ղարաբաղի այդ հերոսամարտը անվիճելի է դարձնում նրա պատմական և օրգանական կապը Մայր Երկրի հետ, մի կապ, որ ամբողջ Ղարաբաղի հայությունը իր հինգ համագումարներում հայտարարել է իբրև ազգաբնակության ինքնորոշման սրբազան մի կամք, ի նկատի ունենալով, որ Ադրբեջանի ոտնձգությունները՝ անվիճելի հայտարարելու Ղարաբաղը, բխում են նրա

նվաճողական քաղաքականությունից, որ ներշնչում է Ադրբեջանին Հայաստանի և Անտանտի թշնամի Տաճկաստանը:

Որ հայ անզեն գյուղացիների, կանանց և երեխաների մորթոտվելը տաճկական ագենտի և Ադրբեջանի կառավարության ստորությամբ տաճիկների հայաջինջ ոճրագործ քաղաքականության շարունակությունն է, որ հայության հետ պիտի միասին վրդովի և դաշնակից պետությունների խիղճը – միտինգն իր ցասումն ու զայրույթն է հայտնում Ղարաբաղի անզեն կանանց ու երեխաների վերաբերմամբ տեղի ունեցած վանդալիզմի հեղինակներին:

Իր ողջույնն է ուղարկում Ղարաբաղի հերոս հայությանը այն կռվի համար, որ նա վարում է հանուն Մայր Երկրի կյանքով ապրելու սրբազան իրավունքի:

Միևնույն ժամանակ միտինգը վստահ է Անտանտայի ժողովուրդների, կառավարությունների և Փարիզի կոնֆերանսի նրանց ներկայացուցիչների արդարամտության և բարեկամական զգացմունքին, որ հայ ժողովուրդը ձեռք է բերել իր աննախընթաց մարտիրոսությամբ, իբրև նրանց փոքր, բայց հավատարիմ դաշնակից, վստահ այդ զգացմունքներին, միտինգը դիմում է նրանց և խնդրում.

Անմիջապես ձերբակալել և դատի հանձնել տեղի ունեցած կոտորածի հեղինակներին, անպայման հեռացնել ամբողջ Հայկական Ղարաբաղից Ադրբեջանի իշխանությունը, որին չի ճանաչում և չպիտի ճանաչի Հայկական Ղարաբաղը: Թույլ տալ Հայակական Ղարաբաղին, համաձայն ազգաբնակչության անդրդվելի կամքի, կցվելու Հայաստանին և եթե այդ կցումը որևէ պատճառով անհնար գտնվի այժմ, Հայկական Ղարաբաղում կազմակերպել դաշնակից պետությունների վարչություն մինչև Փարիզի կոնֆերանսի վերջնական վճիռը»: